

# ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Երևանի Միսիթար Հերացու անվան պետական

բժշկական համալսարանի ռեկտոր

պարոն Արմեն Մուրադյանին

ՀՀ քաղաքացի Ավետիս Գևորգյանից

Իմ երախտագիտությունն եմ հայտնում «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր պլաստիկ վերականգնողական վիրաբուժության և միկրովիրաբուժության բաժանմունքի՝ իմ վիրահատությունն անցկացրած բժիշկ Թեհմինե Հնայակի Ասատրյանին:


2017թ. օգոստոսի 4-ին էլեկտրական սրտոցով աշխատելիս անփութության պատճառով լուրջ վնասեցի դաստակս: Անմիջապես գնացել եմ Չարենցավանի հիվանդանոց, որտեղ ասացին, որ հրաժարվում են վիրահատել ձեռքս, քանի որ ի վիճակի չեն անցկացնել վիրահատությունը: Չարենցավանի հիվանդանոցում ստացա բուժօգնություն, և ուղարկեցին Երևանի Հերացի թիվ 1 հիվանդանոցի միկրովիրաբուժության բաժանմունք:

Այնտեղ հերթապահ բժիշկն էր հենց ինքը՝ Թեհմինե Ասատրյանը, ով միանգամից անցավ վիրահատարան և սկսեց վիրահատությունը: Վիրահատության ընթացքում իմացա, որ դաստակի մեջ կտրել եմ բոլոր 4 մատներիս ջլերը, երակները և մեկ ոսկոր: Թվում էր, թե անհնար է վերականգնել ձեռքս: Սակայն բժշկուհին ասաց, որ կանի ամեն ինչ և բոլոր մատները կաշխատեն և կսնուցվեն: 6 ժամ տևած վիրահատությունը անցավ բարեհաջող, իմացա, որ ստացել եմ ձախ դաստակի ափային մակերեսի կտրած, պատռած վերք, ծալիչ ջլերի և հինգերորդ մետակարպալ ոսկրի բաց կտրվածքով: 3 օր անց կացրի հիվանդանոցում մաքսիմալ հոգատար, շուրջօրյա հսկողության և խնամքի տակ: Թեհմինեի ղեկավարությամբ ամբողջ անձնակազմը շատ հոգատար էր և հարազատի պես էր վերաբերվում ինձ:

Այնուհետ անցել եմ վերականգնողական(մերսում, ֆիզիոթերապիա) կուրսեր: Այժմ անցել եմ բնականոն կյանքի: Ձեռքս ամբողջությամբ վերականգնվել է: Ժամանակի ընթացքում սկսեցի զգալ մատներս: Այժմ կարողանում եմ ամբողջությամբ աշխատեցնել ձեռքս, ինչը ինձ վիրահատության օրն անհնարին էր թվում:

Շնորհակալ եմ, որ կան այդպիսի սրտացավ և մարդկային բժիշկներ, որոնք անում են անհնարինը:

ՀՀ քաղաքացի

  
Ավետիս Գևորգյան

28.05.2018թ.

ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՅՈՒ ԱՆՎ. ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	
ԿՈՒՑԷ ԹԻՎ	6229
29	05 2018 թ.